

Տաճարին հիւսիսային որմին վրայ (ներքուստ) կայ՝

«Ի թվ. ՈԶ ընդ այլ աշխարհս հոլովս հարաւ դաւազան եւ ցասունն Աստուծոյ դաւառն Խլաթա ի ձեռն Խորագմին եւ Թամթարին, ընդ որս եւ մեծահոգակ սուրբ ուխտս Վարազին շինեցեալ վասն մեղաց մերոց յայսմ ամի. ես Ղուկաս հայր Վարազայ առեալ զտիեզերահամբաւ սուրբ Նշանն զչնորհեալն յԱստուծոյ ի փառս մարդկան ի ձեռն Պատրոնիկեայ եւ սուրբ Հովսիփմեանց եւ Թողկաւս մեծ ամ շրջեցայ թափառեալ ի տեղոյ ի տեղ, ապա ի կամսն Աստուծոյ աւմենատես խնամոց Տեառն հասի ի Նոր բերդն առ քրիստոսասէր իշխանն Վասակ յաստուածարնակ անապատ կոչեցեալ վանքս եւ ազդումն հնչեալ առ իս հաճոյանալ սուրբ Նշանին ի տեղոջս, նկարեցի եւ զգեղաղէշ եկեղեցիս արժանի հանգստեան սորա մեծարեալ ի Քրիստոնէիցս առ ի զվանքս եւ ետու զխաչս եկեղեցիս այս միջնորդութեամբ եւ վկայութեամբ տեսուն Յովհաննու շինողի եկեղեցոյս առաջի հրեշտակաց եւ մարդկան եւ հաստատեցաւ ինձ ի տանի սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի, Յակովբայ եւ Յովհաննու յամենայն եկեղեցիս պատարագ: Այդ եթէ ոք հանել ջանայ աստի կապանս եւ անէծս ժառանգեացէ ի հոգի եւ ի մարմին անբռնելի ի սուրբ նշանէս եւ յամենայն սրբոց Աստուծոյ: Որչափ այս եկեղեցիս շէն է, մի ոք իշխեսցէ զխաչս հանել եւ զիմ յիշատակս խափանել, ապա թէ ոչ նախ զինքն ջնջեացէ ի կենաց գրոցն եւ յիշմանէ Աստուծոյ. ասասցեն հրեշտակք եւ մարդիկ, եղիցի, եղիցի<sup>12</sup>»:

Արեւմտեան դրան ճակատակալ քարին վրայ կայ՝

«Ի թվին ՈԶԶ (1237) ես Վասակ որդի Դաւթի, որդւոյ Վասակայ ի տանէ Բագրատունի ի տոհմէ Դաւթայ մարդարէին ի ձեռն Յովհաննու եւ ընծայեցի զԾաղկազուզի իւր կապարոփն ի վանս ի Քրիստոս եւ հաւանութեամբ եղբարցս հաստատեցաւ ինձ պատարագ յայտնութիւնս եւ զատիկն յիմ շինեալ մեծ եկեղեցիս, որպէս իմ հաւրն յիւր շինեալ փոքր եկեղեցին զրեցաւ եւ կնքեցաւ աւնումբ Աստուծոյ, յաւուր յորում Վարա-

<sup>12</sup> Հմմտ. Զալալեան, Ճամբորդութիւն, Ա., էջ 160—161 ուր ձեռագրէ մը քաղուած է այս արձանագրութիւնը: Զալալեան խաչին վրայ արձանագրուած գիտէ՝ «Սուրբ խաչ տէրոնեական շէր Դաւթայ աւղնական յաւուրն անկրական» (էջ 160):

զայ հայրն Ղուկաս զսուրբ նշանն եղ յեկեղեցիս: Արդ եթէ ոք զմեր տուեալ գիւղերս ի մեր եկեղեցոյս հանել ջանայ եւ զմեր յիշատակն խափանել, թէ քրիստոնէայ է՝ ի Քրիստոսէ եւ յիւր ընտրելոցն է նոյնված...» (Արձագանք, 1888, էջ 89. Շահխաթունեան, Ստորագրութիւն, Բ., էջ 369. Արցախ, էջ 336—338):

Վարազայ վանքը ունի հրաշալի գաւթ մը, որ 14.5 մետր երկարութիւնս եւ 13.20 մետր լայնութիւնս ունի եւ հետեւեալ արձանագրութեամբ օժտուած՝ «Թվ. ԶԺ կամաւն Աստուծոյ ես Հայրուստ վայելեալ զճրիպարժ իշխանութեանս եւ հասեալ յայտեղի՝ զարհուրեցայ ի սպառնալեաց եւ գեմեցի յեղբարանոց անապատիս, առ ոտս տէր Յովհաննէս շինողի սուրբ ուխտիս եւ ստացայ զտնակս սակս յիշատակ ինձ եւ իմոցն...»:

Վարազայ վանքը, ինչպէս արձանագրութիւնները կը վկայեն ունեցած է երկու եկեղեցի: Զանոնք շինել տուողներն եղած են Դաւիթ եւ Վասակ Բագրատունիները եւ տէր Յովհաննէս՝ գործին հողին ու մղիչը: Եկեղեցիներէն մին կնքուած է Ս. Աստուածածին անուամբ:

Կիրակոս Գանձակեցին հետեւեալ կարեւոր տողերն ունի՝ «Ընդ սա խարէութեամբ վարեցաւ Դաւիթ իշխան Նորբղին, զի էր նա յազգէն Բագրատունեաց, հայրն Վասակայ իշխանին որ շինեաց զեկեղեցին հրաշագան ի վանքն, որ Անապատ կոչի հուպ ի Նորբերդն, առաջնորդութեամբ եւ ձեռնտուութեամբ արքեպիսկոպոսին Յովհաննիսի Տուեցոյ...: Յիշխանութեան Վահրամ իշխանին եղեւ աւարտումն եկեղեցոյն, որ օծաւ եւ կնքեցաւ յանուն սրբոյ Աստուածածնին» (Պատմ., էջ 72—73):

Հաւանականարար (Անապատ) վանքը Ղուկաս վարդապետի ձեռքով Վարազայ Ս. Նշանի փոխադրութենէն յետոյ՝ Վարազայ վանք կոչուած ըլլայ — պաշտօնապէս:

Վարազի վանքի մէջ կան զեռ ուրիշ քանի մը արձանագրութիւններ, որոնք կը մատնանշեն անոր բարեբարներն եւ անոնց յատկացուած պատարագներն ու ժամերը, այսպէս՝

- 1. Նոր կիւրակէին Ե. պատարագ Զուրջին:
- 2. Յովհաննու եւ Յակոբայ տօնին մէկ պատարագ:

3. Քրիստափորի տօնին Բ. ժամ Մխիթարի եւ Գորանդուխտի:

4. Ս. Խաչի տօնին Գ. պատարագ էլբէկին:

5. Թէոփոսի տօնին Ա. ժամ Թոտորին եւ Խաթունին:

6. «Ի կամս Աստուծոյ ես տէր Յովհաննէս պարոն Վասակայ եղբայրս կամակցութեամբ Բ. աւր պատարագ գրեցաք երկուց հարազատաց Գրիգորոյ եւ միւս Գրիգորին ի տանի Ս. Աստուածածնին... թվ. ՈՂԹ»:

7. Բարսեղի տօնին մէկ պատարագ Արբահամին:

8. Յակոբայ տօնին Բ. ժամ Հայրապետին եւ Խաթունին:

9. Ս. Սարգսի կիւրակէին Ե. պատարագ Սիրադիշայ որդեացն:

10. Տէր Յովհաննէս խորան շինել կուտայ եւ Դաւիթ որդի Վասակայ կը վկայէ թէ՛ «Շինեցի զանապատս իմ իշխանութեանս ձեռամբ վարդապետին Մխիթարայ եւ ի Ոնիթվիս շինեցի զեկեղեցիս ձեռամբ հաւր Գրիգորի եւ նորին միաբանեկի Պետրոսի եւ եղբարցն նորա Յովհաննիսի եւ Ազարիայի եւ ետու հող ի Տանձկուր եւ յեզեր զետին եւ զգրախան ընկուզի ջրաղացէն Համազոյ մինչեւ յընկուզուտն Խարարի եւ ջրաց մի եւ ի Բաւն այդի եւ շինական մի եւ ետուն ինձ Զատիկին աւուրն եւ զճրագալոյցին ժամն...» (Արձագանք, 1888, էջ 89—90):

Գուցէ Վարազայ այս վանքին է որ՝ մաստեալ Յարութիւն իրեններովը Աւետարան մը յիշատակ կը դնէ՝ «...ի վայելումն առաջնորդ Գրիգոր վարդապետին ի թվ. Ռ. Ե. Ե. ի, զեկտեմբերի...» (Լալայեանց, Յուլ. հայ. Զեռ. Վասպ., էջ 524):

«Վարազայ վանքը այժմ ամայի է, Հախումի եւ Շամշաղինու միւս գիւղերի բարեպաշտ կանայք երբեմն ուխտ են գալի նորան, հիւանդաց բժշկութիւն խնդրելով» (Մեղու Հայաստանի, 1883, Թ. 92):

«Մենաստանիս հարաւային կողմին կից է մի այլ վանք իր գաւթով միասին» (Արցախ, էջ 338) զոր շինել տուած է Վասակի հայրը Դաւիթ Բագրատունին (հմմտ. վերը): Այժմ խոնարհած է գաւթին զլուխը:

- 10. ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԳԱՊԵՏԻ ԲԱՐԱՅՐԸ  
Զեմ կարծեր որ Վանական վարդապետի ճգնատեղին, որ «կայ հանդէպ գեղջն, որ

կոչի Լորուտն ի հարաւոյ կողմանէ Տաւուշ բերդի (Կիր. Գանձակեցի, Պատմ., էջ 129) վանք եղած ըլլայ՝ յատուկ իմաստով:

Լորուտ՝ այժմ աւելի ստէպ գործածուած Շլորուտ, Զօրաւոր գիւղին մերձ է (Արցախ, էջ 328):

11. ԱԻՇՈՊԱՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԿԱՄ ԶՈՆՏԱԿ ՎԱՆՔԸ

Յիշատակագրութեան մը մէջ կայ՝ «...Ես անարժան գրիչս Աթանաս... գրեցի զսուրբ Աւետարան ի թուականիս Հայոց ԶԼԷ ի սուրբ ուխտս Աւետարայ ի դուռն սուրբ Աստուածածնին...»: Բարխուդարեան կը գրէ՝ «Ծոպ էր կոչուում ի հնումն այժմեան Դիլիջանի ձորն, իսկ Աստուածածնայ վանքն այժմ անմարդարեակ է, որ կոչուում է Զոխտակ վանք» (Արցախ, էջ 297): — Արցախի Գուստի գաւառին մէջ կայ Դիլիջան անուն գիւղ մը<sup>13</sup> (անդ, էջ 356):

(Շարունակելի): Ը. Ը. ՈՍԿԱՆ

ՄԸՂԱՔԻՆ Վ. ԳԵՐՋՆՍԻ († 1545)  
ՏԵՂԱՆԵՑ, ԶԻՆՐԱՐ ԵՒ ԲԵՐԵԳՈՐԺ

Դերջանի Փողձայ գիւղն եղած է Մաղաքիայի ծննդավայրը. ըստ ան նախընտրած է գաւառին անունով կոչել ինքզինքը Դերջանցի: Քահանայական տան գաւակ էր. հայրը, Մկրտիչ քահանայ, ուղարկած է իր որդին Մուշ (1500), որպէս զբ ուսանի Մշեցի Գրիգոր վարդապետի «համալսարանը» Գլակայ վանքին մէջ<sup>1</sup>: Այն տեղ էր Մարտիրոս արեղայ, որ 1505ին օրինակած է Աւետարան մը «ի գաւառիս Տարօնոյ, ի վանս Գլակայ, ի դուռն սուրբ Կարապետին, ի համալսարանս Գրիգոր քաջ բարունոյն եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Մելքիսէթ արհեպիսկոպոսին<sup>2</sup>»: Ինչպէս կ'երեւայ խոստպահանջ էր Գրիգոր վարդապետ. Մաղաքիա իր ուսման ընթացքը աւարտելու համար հարկադրուած էր առ ոտս Վարդապետին

<sup>13</sup> Տես Օծոպու վանք ի Սիւնիս, Ալիշան, Սիւսական, էջ 483:  
<sup>1</sup> Ինքնակենսագրութիւն (տե՛ս վարը):  
<sup>2</sup> Հոռոմ, Վատիկ. Մատենադարան, Բորլեան Թ. 7. Tisserant, Յուլյակ, էջ 24:

դեղերի 20 տարի համբերութեամբ եւ տու-  
կունութեամբ. իր ուսուցչին ձօնած Գովա-  
սանքին մէջ գետեղած է 1519ին տողերս .

Ի դասատուն յերկար կացի,  
Դառն կենօք զկեանս անցուցի.  
Հառաչելով արտասուեցի,  
Զի արժանացայց կենաց հացի:

Գրիգոր վարդապետ իբր 1515ին կ'ու-  
ղեւորի Երուսաղէմ. այն տեղ կը մնայ ժա-  
մանակ մը եւ կը դասախօսէ: 519ին կը  
բացատրէր իր աշակերտաց Արտաքինքը, այս  
ինքն կ'աւանդէր իմաստասիրութիւնը: Այս  
տարւոյն կը յօրինէ Մաղաքիա իր Գովա-  
սանքը: Երկու տարի ետքը, 1521ին կը ստա-  
նայ ան վարդապետական գաւազանը: Յաջորդ-  
տարին Գրիգոր եւ Մաղաքիա կը մեկնին  
Երուսաղէմէն ցամաքի ճանապարհով: Հա-  
զիւ կը հասնին Հալէպ, կը վախճանի Գրի-  
գոր վարդապետ (1522):

Գրիգոր Վ. Մշեցի միաժամանակ շինա-  
բար էր. կը կանգնէ Մուշի Ս. Կարապետի  
պարիսպը. կը նորոգէ եկեղեցին եւ վանքը:  
Երուսաղէմի մէջ կը բարձրացնէ Հրեշտակա-  
պետաց եկեղեցոյն պարիսպը: Մաղաքիա կը  
գրէ թէ «եւ ես յամենայնի կցորդ եղէ ըստ  
կարողութեան». այսինքն մասնակցած է  
Վարդապետին շինարարական գործունէու-  
թեան: Այս հանգամանքով ուսած է նաեւ  
շինարուեստը, զոր ապա յայտնաբերեց իր  
գործունէութեան ընթացքին: Կը գովուի ան  
իրբեւ քանդակագործ փայտի վրայ:

Վարդապետին մահէն ետքը նորընծայ  
Վարդապետը առանձին վերադարձաւ Դեր-  
ջան եւ բացաւ այն տեղ Դպրոց: Կը յիշէ  
1530ին իր աշակերտները՝ տէր Կարապետ,  
Մեսրոպ, Եղիա, Սարգիս եւ Թադէոս: Իր  
համբարը կը ձգէ իրեն 1543ին Երկանի վան-  
քէն Վրթանէս արեղան. սա կը գրէ. «Երկու  
տարի կեցայ ի վանքն (Երկանի). եւ անտի  
զնացի ի Դերջան, ի Մեծ Մաղաքիա վար-  
դապետի վանքն եւ աշակերտեցայ նմա ի  
թվին ԶՂԲ» (1543). բայց հազիւ երկու տարի  
կարող կ'ըլլայ ունկնդրել Վարդապետին,  
վասն զի Մաղաքիա կը վախճանի 1545ին.  
որ, կ'ըսէ, «եթող մեզ սուգ անմխիթար ի  
վերայ երկրի. զի բազում աշակերտք ան-  
մխիթար եւ որբ մնացաք ի սուրբ հօրէն մե-  
րոյ»:

<sup>3</sup> Էջմիածին, Թ. 2145, Թղ. 197ա (Յիշատակա-  
գրութիւն):

Մաղաքիա Վ. Դերջանցոյ աշակերտ կը  
ներկայացուի նաեւ Կ. Պոլսոյ պատրիարքն  
Աստուածատուր (1537—1550), ինչպէս կը  
գրէ Հրանտ Ասատուր<sup>4</sup>: Նոյնը կը կրկնէ  
Օրմանեան<sup>5</sup>: Բայց սա Վասպուրականի  
չըջանէն կ'երեւայ: Գրիգոր Դարանազցի  
Մաղաքիայի աշակերտն այս անունով Աե-  
բաստացի գիտէ եւ կը հաւաստէ թէ ան գոր-  
ծած է Երզնկա եւ վախճանած է հոն 1587ին<sup>6</sup>:

Այս տարիներուն Կամախի Աւագ վանքը,  
որ եպիսկոպոսական աթոռ էր, ծանր պարտ-  
քերու տակ էր, հարկերու ծանրութեան  
պատճառով: Մաղաքիա կը խորհի զիմել  
Սուրբանին բարեգթութեան: «Վասն այն,  
կ'ըսէ, հարկեցայ ի բազմաց եւ զնացի ի  
սուլթան Սուլէյմանն ի թվին ԶՂԹ» (1530):  
Կը յաջողի. 12.000էն «ի 6000 իջուցի գմալն  
եւ զարեղայից խարածն եւ զիսպանջն<sup>(\*)</sup> բար-  
ձաք ի բաց. եւ եկեղեցեաց նորոգման հրա-  
ման ստաք. եւ եկաք յԱւագ վանքն»: Նոյնը  
լսած է Գրիգոր Դարանազցի աւանդութիւնէն.  
որ կ'աւելցնէ թէ այդ 6000ն ալ «Դիմոցի  
պարոն Թորոս ի վերայ երկրի ցրուեր, ի  
տունն չորսական ստակ կու տան մինչեւ  
ցայտօր»<sup>7</sup>: Ժամանակագիրս 1592ին կը գրէ.  
«Լեալ է Դերջանցի Մեծ Մաղաքի վարդա-  
պետն շնորհալի արուեստիւ եւ բանիւք, ար-  
ղեստք եւ հօր ատենախօս իբր գՊօղոս. եւ  
չատ բարութեան պատճառ է եղեալ եւ շատ  
եկեղեցիք եւ խաներ է շինել. ի մեր Կամա-  
խոյ վանքն է կացեր շատ ժամանակ»:

Երկրորդ անգամ ալ գացած է Մաղաքիա  
Կ. Պոլիս, 1543ին: Այս անգամ խափանել  
տալու համար Մանկաժողովը Կամախի,  
Դերջանի եւ Բարերդի գաւառներու մէջ.  
զարձեալ յաջողութեամբ պահուած: Այս  
մասին պիտի խօսիմ առանձին գլխով:

Չենք կրնար անտեսել Վարդապետի ա-  
րուեստն եւ շինարարական գործունէու-  
թիւնը: Իր շինարարութեանց մասին 1523—  
1530 շրջանին մէջ մանրամասն հաշիւ տուած  
է Մաղաքիա Ինքնակենսագրութեան մէջ:  
Տակաւին հրաման չէր հանած եկեղեցիներ  
շինելու. բաւականացաւ նորոգութիւններով  
եւ կողմնակի շինութիւններով (տե՛ս վարը):

<sup>4</sup> Կ. Պոլսոյ Հայերը եւ իրենց պատրիարքները.  
Ընդարձակ Օրացոյց Աղգ. Հիւանդանոցի, Կ. Պոլիս  
1901. էջ 83:

<sup>5</sup> Մաղաքիա արքեպ. Օրմանեան, Ազգապատում,  
Բ., էջ 2237:

<sup>6</sup> Գր. Կամախեցի, Ժամանակագրութիւն, էջ 341:  
<sup>7</sup> Անդ, էջ 338—339:

Իսկ 1531—1545 տարիներու շինարարու-  
թեանց մասին աղքատ են մեր տեղեկութիւն-  
ները. 1569ին Վրթանէս վարդապետ կը հա-  
ղորդէ, թէ «Մաղաքիա վարդապետն շինեաց  
զՍուրենու խան, զի աւեր էր եւ նա նորո-  
գեաց»: 1540ին արձանագրութիւն մը կը  
հաստատէ, թէ «Մեծ կամուրջն կապեցաւ  
ձեռամբ Մաղաքիա վարդապետի»<sup>8</sup>:

Գրիգոր Դարանազցի, որ շրջած է Կա-  
մախի եւ Դերջան, գիտէ, թէ «եւ այլ բազում  
գործս բարութեան յիշատակի արարեալ է  
այս Մաղաքիաս, որ կան եւ կու յիշատակին  
մինչեւ ցայտօր. որ Լուսաւորչին եւ Աւագ  
վանացն մէկ մէկ գրակալք շիներ եւ այնքան  
զարմանալի արուեստիւ քանդակեր (է), որ  
տեսողքն կու սքանչանան. եւ նմանապէս  
զըրունքն սուրբ Աստուածածնին եւ սուրբ  
Կարապետին սորա է արարեալ» (էջ 339):

Գրութիւններ:

Մաղաքիա Վ. Դերջանցոյ անունին հա-  
րազատ երկու գրուածք միայն ծանօթ է  
ինձի. ասոնք են.

1. Յիշատակարան - Ինքնակենսագրու-  
թիւն, գրուած իր իսկ գրչով՝ 1218ին օրինա-  
կուած Աւետարանի մը մէջ, որ կը պահուի  
Նոր-Ջուղայ, Ամենափրկիչ վանքին Մատե-  
նադարանը, Թ. 26: Չեռագրիս ցուցակա-  
գրութիւնը կատարած է Սմբատ Տէր-Աւե-  
տիսեան. ասկէ արտադրած եմ ես — ինչ  
ինչ տեղեր համառօտելով — 1925ին ի  
Տիփլիս: Տէր-Աւետիսեանի ձեռագիրը տեղ  
տեղ դժուարընթեռնի էր. այս պատճառով  
ինչ ինչ տեղիքներ արտադրութեանս մէջ կը  
կարօտին վերաքննութեան: Յիշատակարա-  
նիս մէջ Մաղաքիա կը հաղորդէ մեզի իր  
կենսագրութեան եւ շինարարական գործու-  
նէութեան մասին շատ կարեւոր տեղեկու-  
թիւններ: Թէեւ հրատարակած է Յիշատա-  
կարանս Հ. Հ. Ոսկեան, Բարձր Հայքի վան-  
քերը, Հանդ. Ամս. 1948, էջ 539—541 = ար-  
տատպուած՝ Վիեննա 1951, էջ 21—23, բայց  
միւսանգամ պիտի ներկայացնեմ այստեղ ինչ  
ինչ ուղղումներով եւ լուսարանութիւննե-  
րով: Այս տեղ յիշուած վանքերու եւ այլ  
տեղանուններու ճշգրիտ տեղագրութիւնը կը  
կարօտի անդրադոյն քննութեան:

2. Գովասանութիւն Գրիգոր վարդա-  
պետի Մշեցոյ ի Մաղաքիայ իւր աշակերտէ  
ասացեալ:

<sup>8</sup> Արեւելք, 1903, Թ. 5355: Տես վարը:

«Հայր անկող այգեստանեաց...» սկզբ-  
ընաւորութեամբ: Պահուած է Երուսաղէմի  
Թ. 1455, Թղ. 227բ—232բ: Չեռագրիս գրիչն  
է տաղասացն Ստեփանոս Թոխաթեցի, որուն  
է Յիշատակարանս. «Գրեցօ ոսոսրքս ի քա-  
ղաքս շէհրի Թոխաթ ձեռամբ Ստեփանոս  
մեղսաներկ իրեցու ի վայելումն Յովսէփ ա-  
շակերտին իմոյ, ի թվականիս Հայոց ՌՀԱ.  
մայիս ամսոյ (դատարկ), յորժամ Ըստամպօ-  
լու զուլն գլուխ քաշեցին եւ զտիւանն եւ  
զսարայն կոխեցին եւ զՍոման փատիչահն  
ըսպանին եւ զայլ գլուխ մարդիքն ջարդեցին,  
եւ եղին թագաւոր զսուլթան Մուրատ Փան  
(ա՛յսպէս), զոր տէր Աստուած զինքն խա-  
ղաղութեամբ պահեցէ. ամէն...»: Տաղիս  
օրինակութիւնը խնդրանքովս հոգացած էր  
լուսահոգի Տ. Մեսրոպ Նշանեան պատրիարք  
իրեն ընտել բարեացակամութեամբ:

Միակ գրական վաստակն է այն Մաղա-  
քիայի գրչէն, բայց բաւական է ճանչնալու  
համար անոր բարեմխտ սերտը, հոգւոյ ազ-  
նուութիւնը եւ մանկավարժական սկզբունք-  
ները: Գրուած է այն 1519ին Երուսաղէմ,  
երբ տակաւին կը կատարէր իր ուսմանց ըն-  
թացքը: 66 տունէ կը բաղկանայ Գովա-  
սանքս, ընդ ամէնը 264 տող: Ունի գրա-  
կան արժէքաւոր քառեակներ: Տող 141—144  
կը պանծացնէ իր ուսուցչին իբրեւ «հալա-  
ծիչ հերձուածողաց, երկարնակ չարափա-  
ռաց», որոնք «գողամիտ կեղծաւորներ» են  
եւ «օրէնքին թիւր քարոզողներ». կ'ակնարկէ  
անշուշտ յոյն օրթոգոքաններն եւ լատին քա-  
րոզիչները, որոնց հաւանօրէն առաջին ան-  
գամ Երուսաղէմ պատահած են Տարօնի վար-  
դապետն եւ անոր աշակերտը, երկուքն ալ  
ազդեցութեան տակ Պօղոս Տարօնեցոյ: Տաղս  
կը հրատարակեմ ամբողջութեամբ. ուղղե-  
լով աւ գրչութիւնն՝ օրի եւ օ գրչութիւնը  
աւի, ինչպէս նաեւ տեղաւորելով Վի անկում-  
ներն եւ զեղչելով յ աւելագրութիւնները:  
Ուրիշ փոփոխութիւններ ներկայացուած են  
ծանօթութեանց մէջ:

3. Կանոնագիրք. Էրիցական հախն եւ  
իբրաւնգն, Մաղաքիա վարդապետի:

«Ի գթութեանցն Աստուծոյ եւ ամենայն  
սրբոց նորա, նաեւ ի Մաղաքէ վարդապետէ  
հասցէ գիր օրհնութեան եւ պահպանութեան  
ամենայն հաւատացելոց քրիստոնէից: Որ  
կանոնագիրքն այս է. զի էրիցական հախն  
եւ իբրաւնքն այս է: Զատկին խաչհամբուրն  
Զ ըստակ...»:

Ձեռագիր էջմիածնի, Թ. 2511: Հրտ. Գ. Վ. Յովսէփեան, Արարատ, 1915, էջ 218:

Ուշ ժամանակի յաւելումը մըն է իբր ժ. Դ. դարուն հաւանորէն Գլաձոր զրուած ձեռագրի մը մէջ, որ կը բովանդակէ Եսայի Նչեցոյ Մեկնութիւնն Եղեկիէլի: Այս ձեռագիրը յետ ժամանակաց ստացած է «կոշկար» Յովհաննէս եւ նուիրած է «ի ձեռն Հարապետ աշակերտին ի դուռն սուրբ Յակոբին, որ կոչի Կապոսի»: Կազմը նորոգուած է Սրապի ձեռքով 1596ին: Որո՞ւն ձեռքով եւ ե՞րբ զրուած է ձեռագրիս մէջ (Թղ. 377բ), յայտնի չէ. ուստի նաեւ Մաղաքիա վարդապետի ժամանակն ալ անծանօթ: Գարեգին Վ. Յովսէփեան, որ հրատարակած է «Կանոնադիրքս» Արարատի մէջ, կը միտի այս Մաղաքիա վարդապետը նոյնացնել Մաղաքիա Վ. Դրիմեցոյ հետ († 1384): Ձեռագիրը տեսած եմ եւ հաստատուած արտագրած 1927ին: Այն ժամանակ համարած էի զայն «ԺԵ.ԺԶ.» դարու զրուածք: Այժմ կը թուի ինձ, թէ յանձին Մաղաքիայի Դերջանցի Մեծն Մաղաքիա ճանչնալու է, որ ժ. Դ. դարու 1525—1545 տարիներուն մեծ հեղինակութիւն կը վայելէր, յատկապէս Բարձր Հայքի մէջ:

4. «Մաղաքիա արեղայի Համալուս բանֆ չափալ ի վերայ իւրաքանչիւր գրոց Հնգամատենին, Յետուայ, Դատաւորաց եւ Հոռութայ: ըստ բաւականին վայելչահաւ ոճով. եւ են ընդ ամենայն տողք 74»: Այսպէս կը գրէ Տ. Սաւալանեան Երուսաղէմի Թ. 998 ձեռագրի (յամէ 1623) ցուցակագրութեան մէջ: Տաղիս սկզբնաւորութիւնն է:

Աստուած անեղ անմահ եւ տէր յաւիտենից...:

Դարձեալ «Մաղաքիա արեղայ» եւ այն 1623ին: Աւելորդ է զլուս յոգնեցնել իր ինքնութեան մասին: Այլուր տեսանք թէ ինչպէս իւրացուցած էր Գրիգոր Ակնեցոյ Թաթարաց Պատմութիւնը: Այստեղ ալ իր անունին սեպհականած է Աստուածաշունչի գիրքերուն կցուած անանուն տաղաշարքերը, որոնք ծանօթ են մեզի արդէն 1384ին զրուած ձեռագրէ մը (Թօփչեան, Յուցակ Սաչիկ Վ. Դարեանի ձեռագրաց, Թ. 1), եւ որոնց արտագրութիւնն ունիմ աչքի առջեւ Հ. Աճառեանի օրինակութեամբ:

Ա.

Յիշատակարան-Ինքնակենագրութիւն.

Ի թուականութեան ԶՀԹ (1530) եւ Մաղաքիա վարդապետ Դերջանցի գնացի ի յՄոնպալ եւ զսուրբ Աւետարանս յիշատակ ետուն ի Դերջան ի դուռն սուրբ Դաւթա եւ սուրբ Լուսաւորչին<sup>9</sup>. եւ է յիշատակ տէր Յովանիսին եւ տէր Աւաքին եւ կողակցին Լալ խաթունին...:

Եւ ես նուստ Մաղաքիա վարդապետ Դերջանցի ի գեղջէ Փողձա, որդի Միկրտիչ քահանայի, աշակերտեցի Երջանիկ բարունապետին Գրիգորի Մշեցոյ, որ էր նման Տաթեւացոյն եւ լի շնորհօք: Որ եւ շինեաց զսուրբ Կարապետու պարիսպն եւ զեկեղեցոյ միջի սալրկապն եւ զԺամատանն. եւ զկէս խցերուն եւ զՏնտեսատուն. եւ զսուրբ Յովհաննու քարեա ժամատունն. եւ այլ բազում շինք անդ: Եւ ապա զԿապոսու հարաւին ժամատունն եւ .Դ. խուց: Եւ գնաց ի յԵրուսաղէմ եւ շինեաց զՀրեշտակապետաց պարիսպն. եւ եկեալ ի Հալապ փոխեցաւ առ Քրիստոս: Եւ ես ամենայնի կցորդ եղէ ըստ կարողութեան. եւ .Ի. ամ աշակերտեցի նմայ եւ ի ԶՀ (1521) թվին զաւազան առի:

Եւ նախ զմեծ Լուսաւորչին աղբիւրն<sup>10</sup> իբրի քարեկրով: Եւ զհարաւին ժամատունն շինեցի սրբաքեր եւ նաղարով<sup>(°)</sup>: Եւ մէկ չարտախ ի բերդին գլուխն: Եւ ապա Գործու սուրբ Թորոսու երկու եկեղեցին<sup>11</sup>: Եւ զԿոթերու սուրբ Սարգսին սալրկապն<sup>12</sup>: Եւ ապա Կարապետուն ժամատունն եւ երեք խուց փողոսն<sup>12ա</sup>: Եւ ապա զԱւաք վանաց<sup>13</sup> հարաւին ժամատունն սրբաքեր եւ վերի Սեղանատեղն եւ .Ա. չարտախ եւ երկու խուց եւ քարեա ամբարն եւ երկու եղի: Եւ ապա զսուրբ Դաւթա պարիսպն<sup>14</sup>: Եւ

<sup>9</sup> Ս. Լուսաւորչի եկեղեցին (եւ վանքը) ի Դերջան կը յիշուի յանուանէ 1451ին (Ոսկեան, 156):  
<sup>10</sup> «Մեծ Լուսաւորչի» վանքը կ'ենթադրէ փոքր Լուսաւորչի մ'ալ. այս երկուքի զանազանութիւնը կը կարօտի քննութեան: Ինձիձեան, Նոր Հայաստ. 97 կը յիշէ Լուսաւորչի մը Ս. Թորոս վանքի «ի գլուս լեւրին»:  
<sup>11</sup> Հմմտ. Ոսկեան, 157:  
<sup>12</sup> Արձանագրութիւն մը եկեղեցոյն վրայ. «ՆՈՐՈԳԵՅԱԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՄ ԹՈՒԻՆ ԶՀԳ. (1525) ԶՆՈՒՄԲ ՄԱՂԱՔԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ. Հմմտ. Արեւելք, 1903, Թ. 5355 եւ Օրմանեան, Աղգապ., Բ., էջ 2237: Կ'ըսուի թէ Ս. Սարգիս նաեւ «Մաղաքիա վարդապետի մենաստան» նկատուած էր. Ոսկեան, 164:  
<sup>12ա</sup> Կարգա՞ ձեղնովն:  
<sup>13</sup> Պղնձայոց Աւաք անապատն է, «անբոյժ ի բարձրամտեղակ տեղով», ինչպէս կը գրէ Յակոբ Կարնեցի. Հմմտ. Ոսկեան, 155—156:  
<sup>14</sup> Հէօպէկ լեռան բարձունքը. Հմմտ. Ոսկեան, 150—161:

զսուրբ Կարապետ<sup>15</sup> եւ զԺամատունն եւ զըլոր շինքն եւ զՉարապն եւ երկու(ս) այլ. եւ զամենայն սպասք վանացն, լուցք եւ բեռնակիրք: Եւ երկու կարմունջ ի Սոտունն<sup>16</sup>: Եւ զԴեւենկայ Եկեղեցին եւ զԺամատունն, եւ մէկ խուց եւ չարտախ ի վերայ ի Կապոսին<sup>17</sup>: Եւ մէկ այլի (ի) Փթառիճ բոլոր աներոջն եւ հնձանոջն<sup>18</sup> յիշատակ ի սուրբ Դաւիթ:

Եւ ապա գնացի ի յԼստամբալ առ մեծ աշխարհակալն սուլթան Սուլէմանն: Ձի Կամխա եւ Աւազ վանացն եպիսկոպոսութեան ման ժԲՈՒ էր. եւ յոյժ նեղացաւ վանք եւ երկիր. եւ այլ ոչ կարէին տալ: Վասն այն հարկեցաւ ի բազմաց եւ գնացի ի սուլթան Սուլէմանն ի թվին ԶՀԹ: Եւ ի ԶՈՒ իջուցի զմալն եւ զարեղակց խարածն եւ զիսպանն<sup>(°)</sup> բարձաք ի բաց. եւ եկեղեցեաց նորոգման հրաման առաք. եւ եկաք ի յԱւաք վանք:

Եւ աշակերտք էին ինձ ի ժամու տէր Կարապետն. եւ տէր Մեսրոպն. եւ տէր Եղիան. եւ առաջին տէր Սարգիսն լի ամենայն շնորհաւք. եւ տէր Թաղէսն: Եւ այժմ զՄաղմոսն ասեմք զաս. եւ ապազան Տեառն եմք ի յանձին:

Եւ թէպէտ հպարտացաւ եւ գրեցի զբանս, սակայն դուք ներուսն արարէք ամենայն սղալանաց իմոց...:

\* Ի թուականին ԶՀԹ (1530) եւ Մաղաքիա վարդապետ Դերջանցի յորժամ գնացի աջողութեամբ Աստուծոյ ի յՄտամբալ, նայ խոճա Քրիստոստունն շատ աւանականութիւն արար ի դրունս մեծամեծաց. եւ զԿամախոյ զեպիսկոպոսութեան ման ի ժԲՈՒէն ի ԶՈՒ իջոյց. յիշեցէք զինքն...: Այլ եւ յիշեցէք զՍոճա Մուլքին... զմեզ կերակրեաց բազում մարդով<sup>(°)</sup>... եւ արծաթի խկի մի եւ մէկ շուրջառ նուէրք ետուր...: (Տէր-Աւետիսեան, Յուցակ Նոր-Ձուղայի Ամենափրկիչ Վանաց Մատենադարանի, Թ. 26 (Աւետարան յամէ 1218):

<sup>15</sup> Երկու Կարապետի վանք յիշուած են հոս. մին է Ս. Կարապետի կամ Շողունի վանքը եւ միւսն հաւանորէն Ս. Յովհաննու. տե՛ս Ոսկեան, էջ 162—164:  
<sup>16</sup> Կասկածելի է «Սոտունն» ընթերցումս: Այս երկու կամուրջներէն զստ շինած է Մաղաքիա երրորդ մը, որ «մեծ» կ'որակուի: Ունի կամուրջն այսպիսի արձանագրութիւն մը. Ի թուին ԶԶԹ ՄԵՆ ԿԱՄՈՒՐՁՆ ԿԱՊԵՅԱԻ ԶՆՈՒՄԲ ՄԱՂԱՔԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍՈՒԼՔԱՆ ՍՈՒԼԵՅՄԱՆԻ, ՈՐ ԹԱԳԱՆՈՐՈՒԹԵԱՆ ՆՈՒՊՈՒՄՍ: Արեւելք, 1903, Թ. 5355 եւ Օրմանեան, էջ 2237:  
<sup>17</sup> Կասկածելի կ'երեւայ ընթերցումս:  
<sup>18</sup> Զ. հնձայոջն:

Բ.

Գովաթիւն Գրիգոր վարդապետի Մշեցոյ, Ի Մաղաքիայ իւր աշակերտէ ասացեալ: Յիսուս որդու զոյն ասա:

Հայր տնկող այգեստանեաց, Որդին մշակ է առանց վարձ, Հողին ջրոց 'ւ արբուցանող, Մինչեւ պտուղըն զայ ի հաս:

Եւ ժողովեն յըշտեմարանս, Ձորն ի հնձան զոմն ի կարաս, Ով որ բարի պտուղ լինի, Յարքայութիւնն է ժողոված:

Նոյնպէս եւ մեծ ըրարունիս, Քան զարեղակն փայլէ յերկրս, Վարուք բարի անուշահոտ, Յորմէ եւ Տէ՛ր դու հոտոտիս:

Որպէս խայծեալ հասեալ այգի, Անուշահամ եւ բարելի, Ի ձեռին Տեառն ճմլեալ զինի, Զծարաւ հողոց բառնայ յերկրի:

Սա աշխարհաւ Տարօնցի, Գեղջն Ամլորդոյն է դըրացի, Խնդիր ելեալ կենաց հացի, Յորմէ հողոյն քաղցըն բարձի:

Անունն Արթուն է եւ զըւարթ, Ձիմաստութիւնն է զզեցեալ զարդ, Պայծառ փայլուն է որպէս զվարդ, 'ւ ինքըն բերկրի յարազուարճ:

Մականունն է Մըշեցի, Որպէս Դաւիթ Ներգինացի, Մեծըն Պօղոս Տարսնացի, Որպէս Բարսեղ Կեսարեցի:

Մընեալ ի վանքըն Գըլակայ Սրբաւրնունդ եւ արեղայ, Մինչ սահմանեալ իւր կէտըն զայ, Ելեալ զընայ ի յերզընկայ:

Ի յեկեղեաց դաւանն եկաց, Եւ ըզմտաց զըրունքն երաց, Ձիմաստութիւնըն ժողովեաց, Որպէս զմեղու զծաղիկ լերանց:

Աշակերտեալ մեծ բարունոյն, Եւ Յոհաննէս կոչեցելոյն, Որ էր նման մեծ Եսայոյն, 'ւ աստուածարան առաքելոյն:

Կրթեալ յիմաստ բանից նորին,  
' և Յրոնէթէոս առ Պօղոսին,  
Եւ կամ Գրիգոր առ Յոհաննիս,  
Եւ Աթանաս Աղէկսանդրին:

Մտաւքն առատ ' և աստուածարան,  
Որպէս Գրիգոր եւ մեծն Յոհան,  
Ճշմարտութեամբ է պարբայեալ,  
Եւ թշնամեացն անգծական:

Եւ թնարիեան շնորհօք լցեալ,  
Հոգևով սրբով առատացեալ,  
Քան զառաջինս դերազանցեալ,  
Յետագայիցըս լոյս տվեալ:

Իմաստասէր եւ սա կոչի,  
Ձինչ Պրդատոն Աթենացի,  
' և Արիստոտէլ Ստագիրացի,  
Եւ Պորփիւրոս Փիւնիկեցի:

Իմաստութեամբ է զարգարեալ,  
Խորըս գիտնոցըն սա իջեալ,  
Որպէս խորէջք յատակ ծովուն,  
Եւ զմարգարիտ ժողովելոյն:

Շինեաց պարիսպ բարձր բրբօք,  
Եւ մեծամեծ անտաշ վիմօք,  
Եւ խորագոյն ամուր հիմօք,  
Բաշխէ պարգեւս որդոց մարդկան:

Երկու կողմանց կառոյց խորան,  
Եւ հաստատեաց անդ սուրբ սեղան,  
Յորում բազմի անմահ արքայն,  
Բաշխէ պարգեւս որդոց մարդկան:

Շինեաց սա շատ եկեղեցի,  
Ժամատներ եւ տեղ դասի,  
Սեղան եղիր կենաց հացի,  
Յագեցելոց եւ քաղցածի:

Սեղան դնէ կենաց հացի,  
Եւ ամենայն բարեօք իլի,  
Ձկերողքն առնէ ուրախալի,  
Ի ներկայիս ' և յապագայի:

Եւ շատք կերան եւ յագեցան,  
Օր ըստ օրէ նոր քաղցեան,  
Եւ այլք սովեալ դիմեն եւ դան,  
Առեալ պարգեւք ուրախանան:

Բազումք լսեն ' և ուրախանան,  
Խորհուրդ առնեն թ' ինքեանք այլ դան,  
Եւ դեգերեալ տեղըն մընան,  
Կենաց հացէն սոված կենան:

ՁԱստուածաշունչն ասաց յառաջ,  
Չաշակերտացն ըզմիտքն երաց,  
Չնրբերն ապա յայտնարանեաց,  
Չմիտըս մարդկան լուսաւորեաց:

Մըտաւքն է սուր եւ բանիրուն,  
Որպէս անդունդք խորըք ծովուն,  
Միտքըն ժողվէ սեռ եւ տեսակ,  
Սեղան դնէ աշակերտուն:

Սա նմանի արեգական,  
Չխաւարն առնէ հալածական,  
Չմիտըս մարդկան լուսաւորէ,  
Կենաց բանիւն անմահական:

Նըման է սա արուսեկին,  
Արեգական Կարապետին,  
Պայծառ փայլէ քան ըզլուսին,  
Որպէս յաւուրս տասն ու հընկին:

Եւ քարոզէ յամէն դիմաց,  
Թող զաշակերտըն կալ ի բաց,  
Չորդիս մարդկան կոչէ ի հաց,  
Յերկնից խորանըն զարգարած:

Ըզմեղուցեալսն զղջումն ածէ,  
Եւ զլուսահատըն յուսադրէ,  
Յերկնից խորանըն հրաւիրէ,  
Ընդ հրեշտակաց դասակարգէ:

Քան զարծելի է սըրընթաց,  
Չմըտաց դրուեքն ունի ի բաց,  
Չխոկումն ունի միշտ առ Աստուած,  
Եւ անհասիցըն վիպասաց:

Անդին ախունք են բանք սորին,  
Որպէս զոսկի արարային,  
Պայծառ փայլուն առնէ զհոգին,  
Չհնազանդելոցն եւ զլսողին:

Նման է սա բուրաստանի,  
Եւ զանազան պըտողով իլի,  
Չկերողքն առնէ ուրախալի,  
Ի ներկայիս ' և ապագայի:

Ի մտաց բխէ յոյժ քաղցր աղբեր,  
Եւ յորդատատ իրբեւ ըզգետ,  
Բազումք ըմպեն ' և երթան ի յետ,  
Շատ ծարաւիք նոր դան ի հետ:

Նման է սա ցուրտ աղբերի,  
Չտապ ծարաւեացըն բարձողի,  
Ուրախ առնէ զմիտքն եւ զհոգի,  
Ով այս աղբերըս պատահի:

Եւ այս աղբերս է յորդատատ,  
Չի զՍուրբ Հոգին ունի արմատ,  
Որ միշտ բխէ յարագուարձ,  
Եւ զարբուցեալքն առնէ զուարթ:

Նոր բանք լըսեմք օր ըստ օրէ,  
Որպէս զՈրդի առ ի Հօրէ,  
Չոր Սուրբ Հոգին տընօրինէ,  
Չտըգիտութիւն մեր փարատէ:

Ուղափառացն է ախոյան,  
Եւ հաւատովն ուղղադաւան,  
Որպէս զԳրիգոր Աստուածարան,  
Եւ ըզիւրեղ Աղէկսանդրեան:

Ի հալածիչ հերձուածողաց,  
Երկարընակ չարափառաց,  
Եւ գողամիտ կեղծաւորաց,  
Չօրէնըս թիւր քարոզողաց:

Սա կորուսիչ սագայելի,  
Եւ բազմութեան լեզէհոնի,  
Այսոց պղծոց ամենայնի,  
Խորս անդընդոցըն սուզողի:

Հոգովն անբիծ եւ անարատ,  
Մարմնով պայծառ որպէս ըզվարդ,  
Մտքըն սուր եւ միշտ զուարթ,  
Եւ ըզտեսողքն առնէ ուրախ:

Բանականաւ խոհեմացեալ,  
Սրտմտութեամբ արիացեալ,  
Յանկականաւ ողջախոհեալ,  
Արդարութեամբ հաւասարեալ:

Տիպըն պայծառ քան զհրեշտակի,  
Որպէս զՄովսէսըն հրաշալի,  
Եւ տեսողացն յոյժ ցանկալի,  
Որպէս զԳրիգորըն Պարթեւի:

Գովութիւնըն բարձր է սորին,  
Մտաց մարդկան որ ի ստորին,  
Անճառ ' և անհաս է գովք սորին,  
Յայտնի յատեան դատաստանին:

Չսա պահեսեցէ աջն անեղին,  
Որպէս երբեմն զիսրայէլ հին,  
Եւ կամ զՅովնան ի փոր կէտին,  
Եւ գիտնիլ զուրն առիւծին:

Չերիս մանկունսն ի մէջ հնոցին,  
Չմեր Լուսատունսն ի վերային,  
Նոյնպէս եւ զսա պահէ յուժովն,  
Մինչ սահմանեալ յօրըն վերջին:

Բայց երանի է մեր աչացս,  
Եւ յարածամ տեսանողացս,  
Յիմաստ սորին վայելողացս,  
Չի բանք սորին է զարդ փառաց:

Փառք եւ պատիւ պարգեւողին,  
Երբորդութեանն երբեակ անձին,  
Ի ներկայիս ' և ապագային,  
Եւ հանդերձեալն յաւիտենին:

Յինըն հարիւր Հայոց թըլին,  
Վեցեակ տասին երկեակ քառին (1519),  
Ի մենաստան Սուրբ Յակոբին,  
Չի արտաքինքն մեկնեալ պատմին:

Մաղաքիաս Դերջանեցի,  
Որ յիշելոյ չեմ արժանի,  
Չսակաւ բանիկս արտադրեցի,  
Չեր սրբութեանդ ընծայեցի:

Ի դասատուն յերկար կացի,  
Դատըն կենօք զկեանս անցուցի,  
Հառաչելով արտասուեցի,  
Չի արժանացայց կենաց հացի:

Բայց համբերեմ յայսըմ հետէ,  
Մինչեւ առից կաթ մի գետէ,  
Ի հոգերուս սուրբ աղբերէ,  
Չոր յորդատատ մարդկան բաշխէ:

Աղաղակեմ առ Տէր Աստուած,  
Ողորմութեան դուռն է ի բաց,  
Որ չի զրկէ ի փշրանաց,  
Այլ պարգեւէ մեզ հաց կենաց:

Այլ հաւատամ ես սերտ յուսով,  
Ով որ դիմէ յԱստուած սիրով,  
Եւ աշխատի ուղիղ ջանով,  
Լըցեալ լինի ինքըն շնորհով:

Վառեալ լինի ինքըն սիրով,  
Եւ անդադար սագմոսելով,  
Աւրհնէ զԱստուած միշտ գովելով,  
Լըցեալ լինի ինք Սուրբ Հոգևով:

Թէ սուրբ կենայ հոգևով մարմնով,  
Գործըս բարիս վաստակելով,  
Չգիրքս Աստուծոյ միշտ կարդալով,  
Առատանայ որպէս ըզծով:

Եւ հանապաղ արթուն կալով,  
Սուրբ խորհրդով միտ դնելով,  
Չբանս իմաստից որոճալով,  
Աղբիւրանայ միշտ բըխելով:

Ձոր ասացի առնէ սիրով,  
Յօժար կամօք հետեւելով,  
Նա գարդարի Հոգևով Սրբով,  
Քան զՎաս վառի պայծառ լուսով:

Ով ծոյլ կենայ երերալով,  
Ձօրն եւ զգիշերն քուն կալով,  
Եւ զորովայն պարարելով,  
Շուրջ պիտի գայ ինքն լալով:

Ձրանս Աստուծոյ քամահելով,  
Ձգիբըս սրբոց պարսաւելով,  
Ատեցութեամբ հեռանալով,  
Հոգևովն այրի անշէջ հրբով:

Ձաւուրս կենաց դատարկ կալով,  
Վարդապետաց պարսաւ տալով,  
Ձարիացեալսն աղճատելով,  
Եւ զըրարան բանբասելով:

Եւ միշտ գինով արբենալով,  
Հոգևով մտօք յիմարելով,  
Ձար խորհրդով խաւարելով,  
ՁԱստուած բընաւ մոռանալով:

Եւ զօր մահուն ոչ յիշելով,  
Յիմար կուսանց նմանելով,  
Բարեաց զործոց հեռանալով,  
Եւ յաղօթից միշտ ծոյլ կալով:

Այլ զօրացիք դուք Աստուծով,  
Եւ անդադար աղօթելով,  
Ձգիրս Աստուծոյ միշտ կարգալով,  
Եւ ջահ վառիք անշէջ լուսով:

Որպէս մեղու միշտ ջանալով,  
Եւ քան զմըրջիմ վաստակելով,  
Արթուն մըտօք յար խոկալով,  
Իմաստնանաս դու Աստուծով:

Ձուրն ի վերուստ միշտ կաթելով,  
Ըզմի տեղի հարկանելով,  
Ձկարծըր վիմերն խորելով,  
Նոյնպէս եւ դու ջանայ սիրով:

Որպէս զեղինըս լծելով,  
Յերկիր ախօսըս բանալով,  
Ըզպնտութիւնըն կակղելով,  
Բոյսըս պէս պէս արձակելով:

Նոյնպէս եւ դու ջանայ յուսով,  
Ձտիւ եւ զգիշեր վաստակելով,  
Ձգիրս Աստուծոյ միշտ կարգալով  
Ձխորս իմաստիցըն բանալով:

Ով որ գայս բանս երգէ սիրով,  
Ուշիմ հոգևով միտ դընելով,  
Նա գարդարի Հոգևով Սրբով,  
Յորժամ որ գայ Տէր մեր ամպով:

Յորժամ որ զԿԶ տուն ներբողեանս ա-  
սես, զԹոխաթցի Ստեփանոս էրէցս յիշես եւ  
ձեզ եւ ինձ Հայր մեր որ յերկինս ասէք:

Է. Ն. ԱԿԻՆԵԱՆ

**1531Ի ՄԵՆԿԵԹՈՂՈՎԸ ՀԵՅԿԵԿԵՆ  
ԳԵՒԵՆԵՐՈՒ ՄԷՋ ԵՒ ՄՆՂԵՐԻՍ  
ԳԵՐՋԵՆՏԻ**

Մանկաթողովի սկզբնաւորութիւնը ոմանք  
կը դնեն ԺԴ. դարու առաջին կէսին սուլտան  
Օրխանի (1326—1350), ուրիշներ Մուրատ Ա. ի  
(1350—1390) օրով: Համմէր իր Օսմանեան  
պետութեան պատմութեան մէջ (Ա. 98) կը  
գրէ<sup>1</sup>. Դարա իմալի Ձէնտէրէլի, եղբայրն  
Օրխան սուլտանի եւ Ալաէդդին վէզիրի, որ  
բանակին դատաւորն էր, խորհուրդ կու տայ  
իր սուլտան եղբոր, որ ան նոր բանակ մը  
կազմակերպէ զուտ քրիստոնեայ մանուկ-  
ներէ: Անոնք բռնարար պիտի խաւարուէին  
եւ մարզուէին զինուորական ծառայութեան  
մէջ: Պարտուածները, ըսաւ, յաղթողին դե-  
րիներն են. անոր կը պատկանին անոնց ինչ-  
քերն եւ կիներն եւ զաւակները, իբրեւ օրի-  
նաւոր ստացուածք: Եթէ մանուկները բռնի  
մահմեդականացուին եւ իբրեւ մարտիկներ  
պետական ծառայութեան առնուին, պիտի  
շահուի անոնց թէ ժամանակաւոր եւ թէ  
յաւիտենական փրկութիւնը: Մարդարէին  
խօսքն է թէ ամէն նորածին կը բերէ իր հետ  
աշխարհ՝ միտութիւն դէպ ի խաւովութիւն:  
Եթէ արծարծուի այդ բերումը քրիստոնեայ  
մանուկներէ կազմուած բանակին մէջ, դեւ-  
րին պիտի ըլլայ այնուհետեւ անոնց միջնոր-  
դութեամբ խալիֆութեան հրապուրել իրենց  
հայրենակիցներն եւ այսպէս պիտի ածի եւ  
ընդարձակուի անոնց բանակը: Առ այս  
կը խորհրդածէ Համմէր. «Այս դժոխային  
ծրագիրը, որ պիտի ապականէր քրիստոնեայ  
մանկտին եւ պիտի նպաստէր մահմեդակա-  
նութեան ծաւալումին, աննախընթաց է հին

<sup>1</sup> Joseph von Hammer, Geschichte des Os-  
manischen Reiches. Pest, 1834, S. 96—98.

եւ նոր ժամանակներու զինուորական բռնա-  
կալութեան մէջ»:

Ի սկզբան առնուեցան այն նպատակով  
քրիստոնեայ գերիներու մանուկները. ապա,  
սկսեալ ԺԶ. դարէն, մանկահաւաքի ենթար-  
կուեցան օսմանեան պետութեան սահմաննե-  
րու մէջ գտնուող քրիստոնեայ տղաք: Եր-  
կու եւ աւելի տարիներ անգամ մը մանկա-  
թողով կ'ըլլար պետութեան զանազան նա-  
հանքներու մէջ երբ 1 առ 10 համեմատու-  
թեամբ կը խլէին բռնի քրիստոնեայ ծնող-  
ներէն մանչէր եւ կը յանձնուէին Կ. Պոլիս  
զինուորական հրահանգանոց:

«Ենի չերի», նոր զօրք անունը ստացաւ  
այս բանակը: Այս զինուորները ոչ ազգ, ոչ  
հայրենիք, ոչ հայր եւ ոչ մայր կը ճանչնային.  
անոնք գիտէին միայն իրենց դրօշը: Սկզբնա-  
ւորութեան 1000 էր անոնց թիւը. Մահ-  
մէտ Բ. ի (1451—1481) օրով բարձրացաւ 12,  
Սուլէյմանի օրով՝ 20, Մահմէտ Դ. ի (1648—  
1693) օրով՝ 40 հազարէ:

Դարանաղցին աւանդութենէ լսած է,  
թէ Մաղաբիա վարդապետ երկրորդ անգամ  
մ'ալ գացած ըլլայ Կ. Պոլիս եւ խափանած  
մանկաթողովը Դերջանի եւ Կամախի շրջա-  
նին մէջ: Կը գրէ. «Եւ այլ ասն, թէ Տղայա-  
թողովն, որ եղեւ ի սուլթան Սէլիմի (°) ա-  
ւուրսն, նա գնաց Վարդապետն ի յՍտամբուլ,  
այնքան տքնութիւն արար ի դրուես արքային  
եւ ժտութիւն արար, մեծ ստիպով խնդրեաց  
տեսանել զերեսս արքային, մինչ ծանուցին  
թագաւորին եւ նա կոչեաց առ ինքն եւ եհարց  
ցՎարդապետն. Ձի՞նչ խնդրես... ասէ Վար-  
դապետն. Եթէ դաի շնորհս առաջի քո, նա  
կամ է ինձ զհարգուումի (Կարնոյ) տղայ  
թողվելն ինձ օժիտ այնես եւ ի տեղի դին  
տղայոցն սակաւ հարկս դնես: Եւ հաճոյ  
թուեցաւ թագաւորին. հրամայեաց այնպէս  
լինել: Որ կու գայր տղայոց թողովն մինչ ի  
Սեւաստ եւ անդից դառնայր եւ ոչ գայր ի  
մեզ: Եւ զիտեմք որ երեք տարին անգամ մի  
կու գայր հարկահանն տղայթողովին, որ  
օղլանջի ստակ ասէին: Եւ ի ժամանակն սուլ-  
թան Մուստաֆային, որ տղայթողով ելաւ՝  
ի թվին Ռ. Հ. (1623), որ ամէն աշխարհք ժո-  
ղովեցին, գնացին որ ի թէնդուպուլի վա-  
չալին այլ բռնութեամբ թողվին. աղօ-  
թիւք վարդապետին մեծին Մաղաբիին զօրա-  
ցեր էր [յ]Ապազան եւ չեթող մտանել յեր-  
կիրն, այլ հալածական արար» (անդ, էջ 339—  
341):

Այս աւանդութիւնը հասած է նաեւ Երե-  
միա Ձէլէպիի սկանչը զբաւոր աղբիւրէ մը:  
Հ. Ղ. Ինճիճեան Մանկաթողովի մասին խօ-  
սելով կը գրէ. «Յետ ժամանակաց ինչ պա-  
տուէր եղաւ քրիստոնէից հպատակաց, ի  
10 արու մանկանց զմին տալ արքայի ի զի-  
նուորութիւն. որով զեղծեալ բազում ան-  
գամ՝ մանկունս յախշտակէին ի տանէ հօր  
իւրեանց ի մարդահարկ: Չայս մանկաթողով  
յաւուրս Ա. Սուլթան Սէլիմի սահմանեալ  
ասէ Երեմիա Ձէլէպի. որ եւ թուէ զժողո-  
վելն նոցա ըստ կարգի թուականաց: Նախ ի  
1517 յաւուրս Ա. սուլտան Սէլիմի. Բ. ի 1519.  
Գ. ի 1531 յաւուրս Ա. սուլտան Սիւլէյմանի.  
Դ. ի 1549. Ե. ի 1590 յաւուրս Գ. սուլտան  
Միւրատայ. Չ. ի 1622. յորում ժամանակի  
թագաւորէր ոչ Բ. սուլտան Օսման որպէս դնէ  
նա ինքն, այլ սուլտան Մուստաֆա կրկին  
թագաւորեալ. յայնմ ժամանակի բերին ի  
Հայոց եւ ի Պօշնազաց Յունաց՝ վեց երամս  
ի Ռումէլիէ, եւ երիս երամս յԱնատօլուէ.  
Իւրաքանչիւր երամք 110 մանկունք... է. ի  
1638 յաւուրս Դ. սուլտան Միւրատայ:  
Ը. ի 1668 յաւուրս Դ. սուլտան Մէհմէմէտի:  
...Եւ որպէս պատմէ անդէն, Դերջանցի  
Մաղաբիա վարդապետն ի 1543 էառ ի Ա.  
սուլտան Սիւլէյմանայ խաղիշէրիֆ այսինքն  
Հրովարտակ, մի առնել մանկաթողով ի Բա-  
բերդ եւ ի Դերջան, որով բարձաւ, ասէ,  
րեւոր եւ ի Դերջան, որով բարձաւ, ասէ,  
յայնք ի սուլ. Սիւլէյմանայ առեալ էին խաղ-  
վելէրիֆ. բայց որպէս ցուցանեն յետագայ  
գիպուածք՝ չեղեն լսելի այն հրովարտակը:  
Մանկունք այսպէս թողովեալք, ի զարգա-  
նալն իւրեանց՝ ոչ ճանաչէին ոչ զձեռքս եւ ոչ  
զհայրենիս, այլ միայն զդրօշակ իւրեանց<sup>2</sup>»:

Նոյնը կը հաստատու Առաքել Դաւրի-  
ժեցի, իր համառօտ ժամանակագրութեան  
մէջ. «ՁՂԲ (1543). Մաղաբիա վարդապետն  
Դերջանցի գնաց առ սուլթան Սուլէյմանն, եւ  
վերացոյց զտղայ թողովելն հրամանաւ նորին  
ի Դերջանայ եւ ի Բարբերդու<sup>3</sup>»:

Երեմիա Ձէլէպի Մաղաբիայի երթն  
Կ. Պոլիս առ Սուլէյման Ա. կը նշանակէ  
1543ին. ուստի երկրորդ անգամ նոյն ճանա-  
պարհը ըրած է ան: Այս լիով կը համապա-  
տասխանէ ժամանակագրութեան, այնու որ

<sup>2</sup> Ինճիճեան, Օսմանեան տէրութիւն որ յերո-  
պա, վենետիկ 1804, էջ 63 (Աշխարհագրութիւն չո-  
րեց մասանց աշխարհի, Ե. 2):  
<sup>3</sup> Պատմութիւն, Վարդաշապատ 1896, էջ 582—  
583: